Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի պատասխաններ՝ 11-րդ դասարան

Միջերկրական ծովի՝ **ավազով** պատված ափին՝ լայն **տափարակի վրա**, հրաշեկ արևի շողերից, թվում է, շնչահեղձ էր լինում եգիպտական չքնաղ քաղաք Ալեքսանդրիան:

Փոթորկի պահերին վեր հառնող ալիքները սուրում էին դեպի քաղաք՝ ահեղամռունչ գալարվելով, և անձկությամբ փարվում սեթևեթող **պչրուհուն**՝ ողողելով նրա ափերը: Սակայն արևկա օրերին շառաչը փոխվում էր ախորժալուր խշշյունի, ու թվում էր՝ կոհակները մեղմաձայն երգում էին, իսկ ծովից փչող սյուքը՝ օրորում նազող գեղեցկուհուն, **որ**, քամելեոնի պես **երփներանգվելով**, շողարձակում էր իր վառվռուն գույները:

Հին ժամանակներում՝ ամռան տոթակեզ մի օր, Ալեքսանդրիայից **քառորդ** մղոն հեռու գտնվող Փարոս կղզում վխտում էին սևամորթ ստրուկները՝ հաղթաբազուկ ու պիրկ մկաններով. նրանք միջանցիկ **պարանոց** ստեղծելու համար հսկա ժայռաբեկորները գլորում էին դեպի նեղ ջրանցքը, **որով** քաղաքը բաժանված էր **կղզուց**: Եգիպտոսի անվանի ճարտարապետ Սոստրատեսը թագավորի **պատվերով** կառուցելու էր լուսատու ջահ՝ մեծ ու երկնասլաց՝ գիշերը ժամանող նավերին **կողմնորոշելու**՝ որ ճանապարհով մոտենան նավահանգստին:

Եվ մի գեղեցիկ օր կղզու հարավարևելյան անկյունում (ճարտարապետը մանրազնին ուսումնասիրել էր տեղանքը) վեր խոյացավ եռահարկ աշտարակը, **որի** հսկա սյուներին **նստած** էր ութանիստ գմբեթը, նրա վերևում՝ ծովերի աստված Պոսեյդոնի բրոնզե արձանը:

Փարոսը նաև դիտաշտարակ էր. գմբեթի ներսում տեղադրված հայելիները անդրադարձնում էին լույսը, **ինչի շնորհիվ** երևում էին քաղաք մտնող բոլոր նավերը:

Ցավոք, իրար հաջորդող երկրաշարժերից ու երկարատև **խոնավությունից** հիմնովին կործանվեց աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող հրաշք կառույցը:

2. **Ավազով**- ներգործող խնդիր, **տափարակի վրա**- բացահայտիչ, **պչրուհուն**- հանգման խնդիր, **որ**-ենթակա, **երփներանգվելով**- ձևի պարագա, **քառորդ**- որոշիչ, **պարանոց**- ուղիղ խնդիր, **որով**- միջոցի խնդիր, **կղզուց**- անջատման խնդիր, **պատվերով**- հիմունքի պարագա, **կողմնորոշելու**- նպատակի պարագա, **որի**-հատկացուցիչ, **նստած**- ստորոգելի, **ինչի շնորհիվ** (պատճառի պարագա), **խոնավությունից** (ներգործող խնդիր):

3. **ողողել** (ափերը), **օրորել** (գեղեցկուհուն), **շողարձակել** (գույները), **ստեղծել** (պարանոց), **կառուցել** (ջահ), **գլորել** (ժայռերը), **անդրադարձնել** (լույսը), **ուսումնասիրել** (տեղանքը),

4.Հաագայի միջազգային դատարան,Մշո Սուրբ Առաքելոց վանք, Չինական մեծ հարթավայր, Շվեյցարական Համադաշնություն, Նիդեռլանդների Պետական խորհուրդ, պարսից լեզու, Սեյշելյան Կղզիների Հանրապետություն, գրիգորյան տոմար, Հին Արևելք, սիամական կատու:

5.**նման**- ած., կապ, **հեռու**-մակբայ, կապ, **արագ**-ածական, մակբայ, **անկախ**- ածական, կապ

6. ուղղական- 1.ենթակա, 2.ստորոգելի, 3.կոչական, 4.որոշիչ

7. **լուտանք**-հայհոյանք, անարգանք, չարախոսություն
շենշող-ուրախ, զվարթ, պայծառ, լուսավոր, երջանիկ
ատոք-լիքը, լեցուն, ուռճացած
ազոխ-չհասած խակ խաղող, ընդհանրապես՝ չհասունացած՝ խակ պտուղ,
դագանակ- հաստ գավազան, մահակ,
սկիհ- եկեղեցական արարողությունների համար նախատեսված արծաթյա անոթ՝ թաս
պառնաս- բանաստեղծների՝ արվեստագետների կաճառ
նախանձախնդիր- եռանդով որևէ բանի հետամտող, որևէ բանի կրքոտ պաշտպան
նշավակել- նախատել, պարսավել, ծաղրել, ծաղրի՝ ծանակի ենթարկել
քղամիդ-կրոնավորի շուրջառ, վերնաշապիկ, փիլոն,սքեմ, պատմուճան, պարեգոտ

8.**տրոյական ձի**- ն*շ.գաղտնի քողարկված միջոց նպատակին հասնելու համար*,

Տրոյայի պաշարման ժամանակ դանայացիները հսկայական փայտե ձի կառուցեցին և այն թողեցին Տրոյայի պարիսպների մոտ, իսկ իրենք հեռացան: Տրոյացիները ձին քաղաք տարան: Նրա միջից գիշերը դուրս եկան թաքնված դանայացիները և բացեցին քաղաքի դարպասները:

տորիչելյան դատարկություն- 1. Ծանրաչափի խողովակում սնդիկից վերև եղած անօդ տարածությունը 2. Փխբ. Բացարձակ դատարկություն, բովանդակության, ունակության, գիտելիքի ևն իսպառ բացակայություն՝ պակասություն:
17-րդ դարի իտալացի ֆիզիկոս Էվ. Տորիչելլիի անունից:Վերջինիս իրականացրած փորձի հիմքում պատմության մեջ առաջին անգամ ստեղծված պարզագույն սնդիկային ճնշաչափն էր:

Գնահատման չափանիշ 11-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:

<u>Ուշադրություն:</u> Շարադրության մեջ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր, կետադրական, քերականական, բառագործածական և ոճական սխալների համար՝ 0,25 միավոր, սխալ տողադարձի համար՝ 0,1 միավոր: